ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 2,555 — Կ. ՊՈԼԻՍ. 1905, ՓԵՏՐՈՒԱՐ 7—20 — 15 ԶԻԼՀԻՃՃԷ, 1322 — 7 ՇՈՒՊԱԹ 1320 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

بوزانتیون
ایمجه یومی و سیاسی غزته، صاحب امتیاز و مدیر مسئولی
بوزانت کچیان
مطبعه و اداره خانه‌سی باب عالی جاده‌سنده ۲۳-۲۵ نومرولی
دار الخلافه

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՃԱՓՈՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ

ԻԲՐ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ. — Ա.

Ռուսաճափոնական պատերազմին վրայ եղած վիճաբանութեան մը միջոցին, որ Ջայր. Արեւելք մեկնելէս անմիջապէս առաջ Ուաշինկթընի Քոզմոզ Ակումբին մէջ տեղի ունեցաւ, Ակումբին երիցագոյն անդամներէն մին հարցուց ինծի. «Եթէ բոլոր Մ. Արեւելեան աշխարհ այս երկու Պետութիւններէն — Ճափոն և Ռուսիա — մէկուն տիրապետութեան տակ ձգուելու սահմանուած ըլլար, ո՞րը պիտի ընտրէիք»: Մերժեցի այս հարցման պատասխանել ճիշտ այդ ձեւին տակ, բայց պատասխանեցի թէ Եթէ ստիպուած ըլլայի ընտրութիւն մ'ընել արդի ռուս կառավարութեան և արդի ճափոնական կառավարութեան տիրապետութեանը միջեւ, առանց վայրկեան մը վարանելու վերջինը կ'ընտրէի»: Անցնող 6 ամսուան միջոցին պատեհութիւն ունեցայ ուսումնասիրել ճափոնական մեթոտներն և ճափոնական նկարագրին վրայ գաղափար ունենալ, և եթէ հիմակ ըլլար նոյն հարցումը, առանց վարանելու կ'հաստատէի ճափոնական կառավարութեան և ժողովուրդին ի նպաստ կարծիքս այն պատճառով որ Ճափոնն իբր Պետութիւն՝ քաղաքակիրթ և այժմէական կ'գտնեմ լիօրէն ուսումնասիրելէս վերջ: Ներկայ յօդուածով նպատակս է ներկայել այն իրողութիւններէն ոմանք, որ ինծի կ'թուի թէ այս եզրակացութիւնը կ'արդարացնեն:

Տարբեր անհատներ ու տարբեր ժողովուրդներ հաւանօրէն պիտի տարբերէին «քաղաքակրթութիւն» բառին սահմանին նկատմամբ, բայց կարծեմ ընդհանրապէս պէտք է ընդունիլ թէ կարգ մը պայմաններ, յատկութիւններ, յատկանիշեր և զարգացումներ կան որք պէտք է գոյութիւն ունենան քաղաքակիրթ պետութեան մը մէջ, և անոնք են. (1) Իմացական և բարոյական կրթութիւն. (2) Կրօնական թոյլտուութիւն և ներողամտութիւն, (3) Ընդհանուր յարգանք մը և հնազանդութիւն օրէնքի, ինչպէս որ ալ գործադրութեան դրուի այն, (4) Դատաստանական դրութիւն մը, որ օրինական պաշտպանութիւն կ'պարգեւէ անձերու և ստացուածքի, առանց դասակարգի խտրութեան, (5) Անհատական թոյլտուութիւն՝ խորհելու և գործելու օրէնքին թոյլատրած շրջանակին և մարդկային գործունէութեան ասպարէզներուն մէջ, (6) Մասնաւոր մակարդակ մը անհատական այն անձնական առաքինութեանց մէջ, որ կրնան նկարագրուիլ իբր ճէնթլմընի մը յատկանիշերը, այսինքն, համեստութիւն, բարոյականութիւն, մարդասիրութիւն և անաչառութիւն: Երկիր մը կրնայ այս յատկութեանց և պայմաններէն մէկ քանին չունենալ և տակաւին քաղաքակիրթ ըլլալ. բայց չի կրնար քաղաքակիրթ կոչուիլ եթէ առանց և ոչ մին ունենայ: Պիտի ջանամ ցուցնել, թէ ինչ է Ճափոնի դիրքը քաղաքակիրթ կեանքի այս անհրաժեշտ հանգամանքներուն հանդէպ:

(1) Իմացական և բարոյական կրթութիւն: Առաջին բան մը, որ Ճափոն նոր եկողի մը ուշադրութիւնը կ'գրաւէ, այն բազմաթիւ արտաքին ապացոյցներն են, որոնք յայտնի կ'ընեն ընդարձակօրէն ծաւալուն դաստիարակութիւն մը: Զոր օրինակ, Թօքիոյի մէջ ամէն խումբ մը խանութներու մէջ գրավաճառի խանութ մը կայ, և ոչ թէ միայն ընկերութեան բարձրագոյն դասակարգերուն բնակած մասերուն մէջ, այլ նաեւ այն թաղերուն և մասերուն մէջ, ուր միայն աղքատ խանութպաններ, արհեստաւորներ և գործաւորներ կ'բնակին: Մայրաքաղաքին մէջ բնակելէս ի վեր հարիւրաւոր մղոն տեղ գացած եմ փողոցներուն մէջէն ուր միշտ մաքրութիւն կ'տիրէ, և կարծեմ թէ չատ չափաւոր թիւ մ'ըսած պիտի ըլլամ երբ յայտնեմ թէ Թօքիոյի մէջ տասը գրատուն կայ Բեդերսպուրկի մէջ գտնուած ամէն մէկ գրատան դէմ: Դպրոցի տղաք, երկու սեռէ, գրավաճառոցներուն պէս ապացոյցներ են, և օրուան մասնաւոր ժամերուն մարդ չի կրնար քիչ մը տեղ երթալ քաղաքին ո՛ և է մէկ մասին մէջ, առանց հանդիպելու Ճափոնցի ուսանող տղաքներու և աղջիկներու որք իրենց մասնաւոր հագուստներն ունին. մինչդեռ տօն օրերու մէջ նախակրթարանական դպրոցներու փոքրիկ տղոց երկարածիգ թափօրներ կ'յառաջանան երգելով ու խայտալով՝ դաշտային խնճոյքի մը, կամ մասնաւոր տեղ մը զբօսանքի գացած ատեննին: Եթէ մարդ գրավաճառանոցներէն կամ դպրոցական տղոցմէ զատ ուրիշ ապացոյց չունենար գաղափար մը կազմելու համար, բնականաբար և անխուսափելիօրէն պիտի հետեւցնէր թէ գէթ կրթական խնդիրներու մէջ Ճափոն աւելի յառաջացած է:

Բայց կրթութեան խնդրոյն մէջ առաւել աւելի վճռական ապացոյցներ կան: Պաշտօնական վիճակագրութիւններ կ'տեղեկագրեն թէ Ռուսիա դպրոցի մէջ ունի 4,484,594 ուսանող, կամ դպրոցական տարիքին մէջ եղող տղոց հարիւրին 25ը: Մինչ Ճափոն ունի 5,351,502 աշակերտ, կամ դպրոցական տարիքի տղաքներուն հարիւրին 93ը: Ռուսիա ունենալով տարեկան 250,000,000 անգլ. ոսկի եկամուտ, նախնական կրթութեան համար կ'ծախսէ 3 միլիոն անգլիական ոսկիէն քիչ մը պակաս. կամ իր բնակիչներէն իւրաքանչիւրին համար երկու շ.. մինչ Ճափոն Ռուսիոյ եկամուտին մէկ ութերորդին ունենալով հանդերձ՝ նոյն նպատակին համար կ'ծախսէ 4 միլիոն անգլ. ոսկի, կամ իւրաքանչիւր մարդու համար 8 1/2 շիլ.: Ռուսիոյ զինուորական ծախքն իր նախնական դպրոցներու համար ըրած ծախքին հետ 18 առ մէկ կ'համեմատի, մինչդեռ Ճափոնինը 4 առ մէկ: Կրթութեան գործնական օգտակարութեան տեսակէտով Ճափոն աւելի յառաջացած է: Ճափոնի մէջ դաստիարակութիւնն հիմնուած է աւելի յարմար սկզբունքներու վրայ, մինչ Ռուսիոյ մէջ, մասնաւորապէս Սինոդին վարած 40,000 դպրոցներուն մէջ, կրթութեան նպատակը չէ միտքը մշակել և լուսաւորել, որքան տալ անոր զուտ կրօնամիտ կրթութիւն մը: Մ. Բոպիէտոնոսցեվ, Ս. Սինոդին Պրոկուրորը, հաւանօրէն ճափոնական վարժարանները պիտի որակէր «անկրօն» բառով. բայց նոյն իսկ իր դպրոցներուն մէջ դաստիարակութիւնն հիմնուած է կրօնային նախապաշարումներու վրայ. մինչ Ճափոնի մէջ հիմնուած է տրամաբանութեան վրայ, և պարզուած է կայսերական հրովարտակին մէջ՝ ուղղուած ուսանողներուն, ուր կ'ըսուի. «Որդիական սէր տածեցէք ձեր ծնողքներուն հանդէպ և սիրեցէք ձեր եղբայրները. սիրագորով այրեր և կիններ եղէք, և հաւատարիմ ձեր բարեկամներուն. պարկեշտ վարք ունեցէք, և զերծ եղէք ամէնուն: Զարգացուցէք ձեր իմացական կարողութիւնները, և կատարեալ ըրէք ձեր բարոյական կորովը գիտութեամբ և ուսումով: Մշակեցէք ձեր չահագրգռութիւնն հանրային գործերու նկատմամբ: Միշտ յարգեցէք օրէնքներն և անոնց հնազանդեցէք, և հարկ եղած ժամանակ հանրային օգուտին համար ամէն զոհողութիւն ըրէք անվեհեր»: (Կրթական հրովարտակ Ճափոնի կայսեր, Հոկտ. 1890:)

Ուրեմն է թէ պետք մէջ չկայ այնքան «կրօնք» որքան կ'գտնուի ռուսական կրթութեան հիմնացքին մէջ, որ կ'ամփոփէ ոչ մանուկներուն գոց ընել քրիստոնէականը, պատկերներու առջեւ խաչակնքել, պաշտել բիւզանդական պատկերներ, բայց ճափոնական կրթութիւնը գոնէ աւելի արժէքաւոր գրաւ մ'ունի, իսկ ռուսականը ծէս գաղտ կրօնային գաւառներուն եկեղեցական պատերուն արձագանգն է: Սակայն և ինչպէս ճափոնական կրթական ծրագիրը պիտի պարգեւէր, որովհետեւ հանրային չահուն և հանրային գործերու զարգացման վրայ համբերութիւններ կ'պարգեւէր: Ռուս քաղաքացին մը չպաշտօնէր ... է գործ գտնել հանրային չահերու հետ: Այդ բանի մը իրողութիւնները կարծեմ թէ բաւական են ապացուցանելու թէ իմացական և բարոյական կրթութեան տեսակէտով Ճափոն աւելի քաղաքակրթուած է և այժմէական:

2. Կրօնական թոյլտուութիւն և ներողամտութիւն: Արդի քաղաքակրթութեան ամէնէն զօրաւոր և օգտակար արժանիք յատկանիշերէն մէկն է կրօնական խնդիրներու մասին լայնախոհութեան, լուսամտութեան և սիրոյ ոգեւորումը: Ամէն երկիր մէջ, որ ինքզինք քաղաքակիրթ կ'կոչէ, մարդ ազատ է ո՛չ թէ միայն իր խղճին և միտքին ու դրդումներուն համեմատ պաշտել իր Աստուածը, այլ նաեւ իր մասնաւոր յարանուանութիւնն յանձնարարել անոնց ալ, զորս նուազ լուսաւորեալ կ'կարծէ: Միսիոնարներ չեն արտօնուիր մտնել Ռուսիա, և անխնամ Քրիստոնեաներ, ինչպէս Տուխոպորներ և Ստունտականներ կ'վտարուին երկրէն:

Հարկ չէ ըսել թէ այս տեսակ եկեղեցական խիստ դրութիւն չկայ Ճափոնի մէջ. Եթէ կարող ես ցուցնել Ճափոնցիի մը աւելի մաքուր հաւատք մը, կամ զԱստուած պաշտելու լաւագոյն կերպ մը, ազատ ես այդպէս ընել, ըլլաս բողոքական, հրեայ, կաթոլիկ կամ Փրկութեան Բանակին մէկ առաջնորդը: Բովանդակ Պետութիւնը կէտկէտուած է միսիոնարութիւններով և կրօնական հրահանգութիւններով, որք երկար ատենէ ի վեր այնքան ազատ են որքան Բրիտանիոյ եւ Մ. Նահանգներուն մէջ: Նոյն իսկ Ներկայ պատերազմին ատեն Ուղղափառ Ռուսական Եկեղեցին, որ Զարին Սինոդին կողմէ հաստատուած է Թօքիոյի մէջ, կը պաշտպանուի հոն, եւ Հայր Նիքոլայի հոգեւոր պաշտօնեան է Ճափոնցի նորադարձներուն, եւ իր գործը կ'կատարէ սովորականին պէս: Մինչդեռ ատեն ռուսական կրօնական պաշտօնաթերթը Ռուսքի Փոլոմնիք (Ռուսական Ուխտաւոր) Ուրալներէն անդին եղող իր ընթերցողներուն կ'յայտարարէ թէ Ճափոն Նեռն է, ուստի Սուրբ Ռուսիոյ պարտականութիւնն է անոր դէմ պատերազմիլ: Ռուսական ուրիշ կրօնական հանդէս մը, Սէրուէ, «Ճափոնի հետ մեր կռիւը Սուրբ Գրոց տեսակէտէն» խորագրով յօդուածի մը մէջ կ'ըսէ. «Ռուսիո նախախնամութենէն առաքուած պարտականութիւն մ'ունի Ուղղափառ Ջրաւորը բովանդակ աշխարհին վրայ տարածելու մասին: Եթէ Մանչուրիա չինական ստացուածք մնար, Չին քրիստոնէութիւնն ընդունելու անհրաժեշտ պէտքը պիտի չզգար, եւ յաւիտեան պիտի մնար հեթանոսական խաւարին մէջ: Հետեւաբար, Աստուծոյ օրէնքը կ'մերժէ Մանչուրիան Չինաստանի վերադարձնելու խնդիրը»: Ջիէօնէ Վէտնիէ (Պատգամաբեր Եկեղեցւոյ) կ'յայտարարէ թէ Ռուսիոյ մղած ներկայ պատերազմն անշուշտ համաձայն է Աստուծոյ կամքին: Ինքն էր որ հրամայեց Հրեաներուն Քանանացիները բնաջինջ ընել, եւ Ճափոնցիները քաղաքակրթութեան Քանանացիներն են:

Թօքիօ. — ՃՈՐՃ ՔԷՆԸՆ
ՅՈՎՀ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ — (Outlook)

ԾԱՅՐԱՅԵՂ ԶԳԱՅՆՈՏՈՒԹԵԱՆ ՄԷԿ ԳԻՒՏԸ

ՇՈՒՆԵՐՈՒ, ԿԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԹՌՉՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ Ի ՓԱՐԻԶ

Բարիզեան Հանդէսէ մը քաղած ենք հետեւեալ չահեկան տեղեկութիւնները, զորս թարգմանաբար Բիւզանդիոնի ընթերցողներուն կ'նուիրենք: Հարկաւ այս տողերը կարդալով չատեր պիտի ցաւին թէ ինչո՞ւ գտնուին տեսակ մը մարդիկ որոնք իրենց գորովի սիրտերու զգայնութիւնն անասուններու չռայլեն և վայրապար ծախքեր ընեն, մինչդեռ աւելի քիչ ծախքով կրնային այնչափ մարդկային վիշտեր ամոքել: Ամէն մարդ կ'ընդունի թէ պէտք է սիրել և քաղցրութեամբ վարուիլ կենդանեաց հետ, մանաւանդ երբ այս կենդանիները մեզ կ'սիրեն և թշնամի չեն: Բայց որչափ որ օրինաւոր ըլլայ այս զգացմունքը, պէտք է որ սահման մը, չափ մ'ունենայ: Երբ այս չափը կ'անցնի, ծայրայեղութիւն է: Պէտք է մտածել թէ կենդանի և վերջապէս կենդանի է, մարդ չէ:

Պատմութեան մէջ կենդանիներու համար այս սիրոյ ծայրայեղութեան չատ օրինակներ կան: Նախկին իշխաններն իրենց ձիերուն համար մարմարեայ ախոռներ և ոսկեզէն մսուրի վանդակներ չինել կուտային: Կալիգուլա իր ձին հիւպատոս անուանած էր: Միջին Դարուն, աւատական իշխան մը աւելի կ'յարգէր իր ձին և իր չուներու երամը քան թէ իր տիկինը: ԺԸ. Դարու աշխարհիկ կիներն առաւօտեան չէյլոյն իրենց կապիկներուն հետ կը խմէին, թութակ մ'ալ առջեւնին: Իրենց պառկելու սենեակը գորշ ժանեակներով լեցուած էր, որոնք ամէն կողմ կ'զգեստաւորէին, թէ՛ կերակուրի և թէ թղթախաղի սեղանին վրայ: Շատերն ալ անպատճառ սիրական չուն մը կ'ունենային, որ իրենց կերած սենեակին մէջ հաւու գիստ մը կամ փասիանի թեւ մը կ'ուտէր եւ բարձերու եւ բազմոցներու վրայ կ'տիրապետէր: Մարի Լէշզինսքա Թագուհին գիշերը տասն անգամ անկողնէն կ'ելնէր իր չունը խնամելու համար, եւ Լուի անուամբ բժիշկ մ'ալ չուները բժշկելուն համար աճապին զղեակ մը եւ հողեր ունէր կ'ստանար: Պուէտներ, պատկերահաններ եւ արձանագործներ այս կենդանիներն կ'անմահացնէին: Պուէտները Մէրքիւրի օրագրին մէջ անոնց մահուան վրայ ողբալով, պատկերահանները պատկերներ գծելով, և արձանագործները անոնց արձանները քանդակելով:

Սիրոյ այս ծայրայեղութեան օրինակները դեռ մինչեւ այսօր կ'գտնուին: Շուներ կան որք պերճ կեանք կ'վարեն: Կահագործը՝ իրենց խշտեակը (riche) թափիչով և կերպասներով կ'պատէ, գոյնզգոյն ժապաւէններով կ'զարդարէ և արծաթեայ զանգակները կ'զետեղէ, որք զուարթ կը հնչեն: Վարսայարդարը կուգայ չաբաթուն երեք անգամ կ'լուայ, կ'մաքրէ, անուշահոտ իւղերով կ'օծէ, փոշիներ կ'դնէ և իրենց վզին, ոտքերուն և կռնակին վրայ վարսի փունջեր կ'յարդարէ: Դերձակը՝ ասեղնագործ կէթել վերարկուներ, և իրենց սեփականատէրով եղանակին համեմատ կարճ կամ երկար բոլոններ կ'կարէ: Ոսկերիչը՝ իրենց թաթիկներուն համար ապարանջաններ կը դրուագէ: Այս չուներն յատկապէս սպասարկու ծառաներ ունին: Մեծ խնամք կը տարուի որ օգտակար փոքրիկ տներ վարձուին, որպէս զի այս չուները չնեղուին և ուզածնուն պէս կարենան խայտալ: Վա՜յ այն ծառաներուն որք զանոնք լաւ չեն խնամեր, կամ անոնց հաճելի չեն ըլլար, ասոնք տան մէջ երկար ատեն չեն կրնար մնալ:

Կենդանիներու համար սիրոյ այս ծայրայեղութիւնն այս անգամ իր վերջին գագաթնակէտն հասած է: Այս վերջին գիւտն եղած է կենդանեաց յատուկ գերեզմանատուն մը չինել: Այո՛, գերեզմանատուն մը, ո՛չ աւելի ո՛չ պակաս: Գերեզմանատուն մը՝ չուներու, կատուներու և թռչուններու համար, չիրիմներով, մահարձաններով, տապանագիրներով կատարեալ գերեզմանատուն մը: Մինչեւ այս ատեն անոնք որ իրենց հաւատարիմ չունը կ'սիրէին, դաշտի մը ծայրը, ծառի մը տակ հանգստեան տեղ մը կ'ճարէին, չատերն ալ գետը նետելով կ'բաւականանային: Բարիզի մէջ 150,000 չուն կայ, եւ չունն ալ միջին հաշուով ութ տարի կ'ապրի, հետեւաբար հարիւրին 12ը կ'մեռնի, այսինքն տարին 18,000 չուն: Արդ, երեւակայեցէք թէ ո՛րչափ չան դիակներ պէտք է մոզվել բերդերէն դուրս կամ Սէնի թումբերուն չուրջը: Քաղաքապետութիւնը միայն Սէն գետին մէջէն այս դիակները ժողվելու համար տարուան 4000 ֆրանք կ'վատնէ:

Բնական է որ այս ծայրայեղօրէն զգայնոտ սիրտերուն մեծ վիշտ եղած է իրենց սիրեցեալ կենդանիներուն աստանկ տխուր վախճան մ'ունենալը, և մտածեր են թէ ինչո՞ւ այս խեղճ կենդանիները քաղաքին մէկ կողմը ծառերու և ծաղիկներու մէջ վերջին հանգստեան խաղաղ կայան մը չունենան: Արդէն ի Լոնտոն Հայտ Բարքին մէջ և Պրիւսէլ ալ Լէքէնի Բուէօի մէջ կենդանեաց յատուկ գերեզմանատուն կար: Ֆրանսական գերեզմանատունն ալ 1899 Դեկտ. ամսուն բացուեցաւ, Անիէրի՝ մակոյկավարութեան այս դասական երկրին մէջ, Սէն գետին ճիշտ մէջտեղը Ռավաժէօրներու կղզիին մէջ՝ զոր երկուքի կը բաժնեն Քլիչի կամուրջները, և զոր անմահացուցած է Լոժէն Սիւ իր Դոմնիք Բուլէնով: Տեղն հիանալի է և չէնքն սքանչելի: Երեք դռներ կան, մէկ մեծ և երկու պզտիկ: Այս երկու դռներէն միոյն քով կարմիր կղմինտրներով ծածկուած երկու սիրուն պզտիկ տներ կան, որք կարեւոր պաշտօնեայ մը կ'պատսպարեն. «Շուներու և ... ընտանի ... պահապանը (conservateur)»: Հոն կ'պահուին նաեւ տեղւոյն արձանագրութիւնները, վասն զի թէպէտ նոր չինուած է, բայց միւս բոլոր վաղեմի հաստատութեանց պէս արդէն ունի իր գիւտատունը. երեւելի չուներու պատկերներ և անոնց սերնդաբանութեան վերաբերեալ գործեր և հրատարակութիւններ: Աղօտ չուն մը իր խշտեակին մէջ կ'մրափէ և յոգնած աչքով կը դիտէ ամէն օր եկած չան դիակները: Գերեզմանատան կէսը ծաղկոցներով և ծառերով պատած է, իսկ գերեզմանները դէպ ի մէկ ծայրը դրուած են: Հոն ամէն ինչ աւելի հանդարտ և լաւ է: Կղզւոյն ծայրն աճապին ծառեր պատած են և ատոնց ոստերն երբ հովէրէն կ'չարժին, քաղցր սօսաւիւնով գերեզմանատան վրայ կ'հակին: Ջուրին թեթեւ ծփանքը կը լսուի, և կանաչագոյն Սէն գետը կ'երեւի որ յամրաբար դէպ ի գորչ և խառնագոյն Բարիզ կ'հոսի, այն ինչ աջ կողմը՝ գետեզերքին ճերմակ և վարդագոյն տուներն երփներանգ կ'փայլին արեւուն չողերէն: Նեղ ծառուղեաց մէջ դալարագեղ մարգագետիններու վրայ պզտիկ չիրիմներ կը բարձրանան: Հոս՝ չուներ, հոն՝ կատուներ, քիչ մը անդին թռչուններ, և այս չիրիմներն ալ կէս մէտր բարձրութիւն ունին: Ասոնք պատուանդաններ, քարէ կոթողներ, պորմեր և վանդակներ են, որոց վրայ խիստ հետաքրքրաչարժ տապանագրեր կան: Մէկ քանին հոս օրինակենք:

Հասարակ կարծր քարէ պատուանդան մը և վրան չիփ չիտակ վէմի մը վրայ ուր արուեստագէտ մը գչէրը (ciseau) քանդակած է հետեւեալ տողերը—ոտանաւոր:

Ահօ Մընէտ, որ ուէնը էր,
Այլ Բէդ մ' չուն տուրդ ու Բուրէ,
Զոր տղաննեց ծովէն դառոկին մէջ,
Բուլուրուէրբ մի վոյրէնէ:

Երկու պզտիկ խչտեակներ կան ճարտարապետական վաղեմի ոճով կառուցուած և իրարու կցուած և այս արձանագրութիւնը կ'կրեն.

Բուրէ և հուսորդէմ Պլուէ:—Իմ սէրէլէ և Բուրէ ԵԲ-ԷԲԷ: Այն [illegible] որ [illegible] մուրուց եչէրէ վրայ, [illegible] մէջ ալ [illegible] մուցնէ:

Ուրիշ մ'ալ.—

ՑԱՐՓԱՆՔ ԼՈՒԼՈՒԻ (1895—1900)

[illegible]

Ուրիշ կողմ մ'ալ հինցած և պայմանագրական բանաստեղծութեան յորդումներ կան:

Յոլէթ 4 տարեկան:— [illegible]

Ո՞ր սիրտը կրնայ դիմանալ սասնկ բանաստեղծական վիշտերու յայտնութեանց:

Թաղման հանդէսը չատ պարզ է:

Գերեզմանատան պահապանը կ'երթայ չունը, կատուն կամ թռչունն առնելու, ուղղանկիւն սնտուկի մը մէջ կ'դնէ որ tricycle-ով միացած է, և ինքն ալ նստելով կ'առնէ կ'բերէ: Հողին 5 տարուան համար 25 Ֆր. կ'վճարուի, տասն տարուան համար 50 Ֆր., 25 տարուան համար 75 Ֆր., իսկ մշտնջենաւորի համար 100

ԹԵՐԹՕՆ

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՐԿԻՐ (4)

Բ.

Այսքան սաստիկ փոթորիկ մը երկար չէր կրնար տեւել այդ եղանակին. բայց չէ՞ մի որ արգելք կ'ըլլար իրենց մտադրութեանց իրագործումին: Եթէ երբեք ամբողջ օրը չարունակուէր փոթորիկը, պէտք էր որ քայքերնին կարէին ա՛լ Նաւուն ընդ առաջ երթալու մասին: Բնական էր որ եթէ Նաւն ապահով տեղ մը կեցած չըլլար, պիտի ստիպուէր մեկնիլ անմիջապէս և չորսիւ արեւմտեան հովին, պիտի հեռանէր երթար Նոր—Զելանտայի եզերքներէն:

Բայց Էրնեստ սա կարծիքն յայտնեց որ Նաւը, փոխանակ մեկնելու, ընդհակառակը Փրկութեան ծոցը ապաստանած կրնար ըլլալ:

—Անկարելի չէ ըսածդ, պատասխանեց Մ. Զէրմաթ, բայց կ'կրկնեմ որ պէտք է զգուշութիւն ընել:

—Այն ատեն մեք ալ կ'հսկենք, մայր, ըսաւ Ֆրանսուա: Եթէ պէտք ըլլայ, ամբողջ գիշերն ալ կ'հսկենք:

—Եթէ Բրոսբէքդ—Հըլի բարձունքին ելլենք կամ Ֆալքէնհօրսթ երթանք, աւելի աղէկ կրնանք դիտել հեռուն, յարեց Ճէք:

Ապահովաբար լաւ գաղափար մ'էր Ճէքի ըսածը, բայց ատենը չէր խորհիլ այդ բանին վրայ, որովհետեւ օդն աւելի գէշցեր էր ժամէ ժամ. հովը կատաղօրէն կ'փչէր և անձրեւն հեղեղանման կ'իջնէր վար այնքան ուժգնութեամբ որ Շնագայլերու առուակին յորդեց և վրայի կամուրջը քիչ մնաց որ քշուէր ջուրերէն: Մ. Զէրմաթ և իր զաւակներն անդադար զբաղեցան և մեծ ջանքերէ վերջ հազիւ թէ կըրցան արգիլել ջուրերուն ընթացքը Ֆելզէնհայմի ցանկապատէն ներս: Պէթցի և Ճէննի չհամարձակեցան ոտքերնին դուրս դնել, տխուր օր մ'էր իրենց համար, տխուր մանաւանդ անոր համար որ Նաւը պիտի մեկնէր անդարձ կերպով:

Երբ գիշերը վրայ հասաւ, հովն աւելի սաստկօրէն սկսաւ գոռալ: Մ. Զէրմաթի ազդարարութեան վրայ, տղաքը մինչեւ առաւօտ հսկեցին փոխնիփոխ: Տանը պատուհանէն կ'դիտէին ծովը: Եթէ Նաւ մ'անցած ըլլար հոնկէ, նշմարած պիտի ըլլային զայն անտարակոյս. եթէ թնդանօթի հարուած մը նետուէր, լսած պիտի ըլլային զայն, հակառակ ժայռերուն վրայ ինկող ալեաց որոտալի ժխորին: Երբ ծովն իջնար քիչ մը, չորսերնին մէկ իրենց մոմլաթեայ հագուստներով դուրս կ'ելլէին և կ'յառաջանային դէպի Շնագայլի առուակը, ապահով ըլլալու համար թէ նաւակն հաստատ կեցած էր իր տեղը:

Փոթորիկն երկու օր տեւեց: Ծովը, ալիքներուն փրփուրովը ճեփ ճերմակ, ամայի էր դեռ: Իրապէս ո՛չ մէկ Նաւ չպիտի համարձակէր մօտենալ ցամաքին և վտանգի ենթարկել ինքզինքը: Տէր և Տիկին Զէրմաթ արդէն ամէն յոյս կորած էին: Էրնեստ, Ճէք, Ֆրանսուա, իրենք ալ վարժուած այս տեսակ միջադէպներու որք սովորական դարձած էին ալ, չյաջողեցին նաւուն հետ հաղորդակցութեան մտնելու առիթը փախցուցած ըլլալնուն: Միայն Ֆրիցն էր որ ցաւ կ'զգար և այն ալ ո՛չ թէ իրեն համար, այլ Ճէննիին համար:

Արդարեւ, եթէ Նաւն հեռացած ըլլար այլեւս չվերադառնալու պայմանաւ, ի՛նչ դառն յուսախաբութիւն կրած պիտի ըլլար Մոնրոզի աղջիկը: Այս պարագային, իր մօրը քով վերադառնալու կարելիութիւնը կրկին կ'դադրէր գոյութիւն ունենալէ:

—Յուսանք, յուսանք տակաւին, կը կրկնէր Ֆրից մխիթարելով Օր. Ճէննիի յուսահատական վիճակը: Եթէ այս Նաւն ալ չըլլայ, ուրիշ մը պիտի գայ հետազօտութեան համար, քանի որ հոս ըլլալնիս հասկցուցինք ալ:

Երկրորդ օրը, օդն հիւսիսի փոխուած ըլլալով փոթորիկը դադրեցաւ: Փրկութեան ծոցին ներքին մասին մէջ ծովն հանդարտած էր բոլորովին: Զէրմաթ ընտանիքը խմբովին ելեր և հաւաքուեր էր ծոցին եզերքը:

—Շանաձուկի կղզին երթանք նաւակով, վտանգ չկայ ա՛լ կարծեմ, առաջարկեց Ֆրից:

—Ի՞նչ պիտի երթանք ընել հոն, հարցուց Տկն. Զէրմաթ:

—Թերեւս Նաւը մեկնած չըլլայ դեռ և կամ փոթորկին ատեն մեկնած և նորէն վերադարձած կ'ըլլայ: Մէկ երկու թնդանօթի հարուած կ'նետենք դարձեալ և եթէ պատասխան ընդունինք...

—Այո՛, Ֆրից, այո, գացէք, կրկնեց Ճէննի որ իր կարգին կ'փափաքէր միասին երթալ:

—Ֆրիցն իրաւունք ունի ըսաւ Մ. Զէրմաթ. Ձեռքերնիս եկածն ընենք: Եթէ Նաւն հոն ըլլայ, պիտի լսէ մեր թնդանօթին ձայնն և պիտի պատասխանէ:

Նաւակը մէկ երկու վայրկեանէն պատրաստուեցաւ, բայց դեռ Ֆրից անոր մէջ չնստած Մ. Զէրմաթ հրամայեց որ մօրն ու Ճէննիի քով մնայ տնկին և թոյլ տայ որ Ճէքին հետ մեկտեղ երկուքն երթան: Մ. Զէրմաթ դրօշ մը պիտի առնէր որպէս զի անով նշան տար իրենց: Եթէ երեք անգամ երերցնէր դրօշը, Ֆրից ընտանեօք Ֆալքէնհօրսթ պիտի երթար և վերջէն իրենք ալ պիտի փութային գալ հոն ի հարկին ամէնքը մէկ Ուալդէկի ագարակներն և կամ Էպէրֆիւրթի վանքն ապաստանելու համար: Ընդհակառակն եթէ Մ. Զէրմաթ երկու անգամ դրօշն երերցնելով զայն կանգնէր մարտկոցին քով, պիտի հասկցուէր որ վտանգ չկայ և Ֆրից պիտի գար սպասէր իրեն ի Ֆելզէնհայմ:

Աւելորդ է ըսել թէ այս զանազան նշանները դիւրաւ պիտի նշմարուէին Շնագայլի առուակին բերնէն, պարզ դիտակի մը միջոցաւ:

Ճէք նաւակը քշած էր նաւամատոյցի ժայռերուն մօտ: Հայր ու զաւակ նստան անոր մէջ և թիաձակի մէկ քանի հարուածներով մեկնեցան զայն դէպ ի Շանաձուկի կղզեակը:

Մ. Զէրմաթի սիրտը կ'բաբախէր ուժգին քանի կ'մօտենային կղզեակին: Երբոր հոն հասան, Ճէք և ինքը ցամաք ելան առաջարանքով և հապճեպ ակնարկ մը նետեցին չուրջերնին: Ծովուն վրայ որ դեռ փոթորկալից էր, ոչինչ կար տեսանելի: Մ. Զէրմաթ վերջին անգամ ըլլալով հարցուց Ճէքի.

—Եղբօրդ պէս վստա՞հ ես դուն ալ թնդանօթի ձայնը լսած ըլլալուդ:

—Ինչպէս չէ, չատ աղէկ լսեցինք.

—Աստուծոյ կամքն է, մրմնջեց Մ. Զէրմաթ:

Որովհետեւ Ֆրից լեցուցած պատրաստած էր արդէն թնդանօթը, կ'մնար միայն կրակ տալ անոր:

—Ճէք, ըսաւ Մ. Զէրմաթ, երկու անգամ պիտի նետես թնդանօթն իրարմէ երկերկու վայրկեան ետքը. յետոյ նորէն վառօդ լեցնելով, երրորդ հարուած մ'ալ պիտի քաշես:

—Շատ լաւ, հայր, հասկցայ դո՛ւն:

—Ես ալ քիչ մը հեռու կեցած մտիկ պիտի ընեմ որ պատասխանող կա՞յ մեր թնդանօթին:

Օդն ալ կ'նպաստէր արդէն այս քննութիւնն ընելու. հովը բոլորովին մեղմացած էր և թնդանօթի ձայն մը դիւրաւ պիտի կրնար լսուիլ: Մ. Զէրմաթ մէկ քանի քայլ հեռանալով կեցաւ ականջը դէպի Արեւելքի կողմը տուած, մինչդեռ Ճէք իրարու ետեւէ երեք պայթում արձակել կուտար թնդանօթին կանոնաւոր կերպով:

Յանկարծ, թնդանօթի առաջին հարուած մը կուգար պատասխանել իրենց:

—Հա՛յր, Նաւն հոն է, պոռաց Ճէք:

—Մտիկ ընենք, մի խօսիր, պատասխանեց Մ. Զէրմաթ յուզումով:

Յաջորդաբար, ուրիշ վեց հարուածներ լսելի կ'ըլլային: Ճէքի հայրը, դրօշն երկու անգամ երերցնելէ վերջ, ցցեց զայն մարտկոցին քովն ի վեր:

Եթէ Ֆելզէնհայմէն լսած չըլլային նաւուն պատասխանը, գոնէ դրօշը կանգուն տեսնելով որոշեալ տեղը, պիտի հասկնային թէ ըսաւ վտանգ չկայ: Մնաց որ, կէս ժամ վերջ երբ Նաւակը վերադարձաւ, Ճէք դուրս ցատկեց անկէ խոկոյն ուրախութենէն պոռալով.

—Եօթն հարուած, եօթն հարուած արձակեցին ի պատասխան մեզի:

—Եօթն անգամ փառք տանք Աստուծոյ, պատասխանեց Ֆրանսուա:

Սաստիկ յուզուած, Ճէննի Ֆրիցի ձեռքն իր սիրին մէջ առաւ, յետոյ գիրկը նետուեցաւ Տկն. Զէրմաթի որ չկրցաւ զսպել իր արցունքներն և համբուրեց զայն:

Հետեւաբար, Նաւուն հոն ըլլալուն մասին ա՛լ տարակոյս չկար: Մօտակայ ծովախորշերէն մին ապաստանած ըլլալու էր. թերեւս ալ բնա՛ւ մեկնած չըլլար փոթորկի պահուն, իսկ հիմակ երբեք պիտի չմեկնէր մինչեւ որ հաղորդակցութեան չմտնէր իրենց հետ և անցած դարձածը չհասկնար:

—Երթանք, կրկին անգամ ճամբայ ելնենք, կ'ըսէր Ճէք:

Բայց խորհրդատուն Էրնեստ կարգ մը բացատրութիւններ տուաւ, զորս գնահատեց Տկն. Զէրմաթ: Ո՛ր ազգին կ'պատկանէր Նաւը, ինչպէ՞ս կարելի էր հասկընալ, չէ՞ր կրնար ըլլալ որ անիկա հրոսակներու խումբի մը պատկանէր կամ թէ իրենց ձեռքն ինկած ըլլար: Այս պարագային, Զէրմաթ ընտանիքին գլխուն փորձանք կրնար գալ, ուրիշ բան չէ:

—Ճիշդ է, կարելի եղածին չափ զգոյշ պէտք է հասկնանք եղելութիւնը, վճռեց Ֆրից:

—Այո՛, պէտք է, կրկնեց Ճէննի որ չէր կրնար զսպել իր անհամբերութիւնը:

—Ես Նաւակ կ'մտնեմ արդէն, աւելցուց Ֆրից և քանի որ օդն հանդարտ է, կ'յուսամ առանց դժուարութեան անցնիլ հրուանդանէն:

—Լաւ, պատասխանեց Մ. Զէրմաթ, ինչպէս թող ըլլայ, անորոշ վիճակի մէջ մնալէն աղէկ է ընելիքնիս: Բայց Նաւին մօտենալէ առաջ, գաղափար մը կազմելու է անոր վրայ, Ֆրից, քեզի հետ պիտի գամ:

Ճէք վրայ հասաւ:

—Հայր, թիավարելու մէջ աւելի ուժով եմ քենէ, թող տուր որ ես երթամ Ֆրիցին հետ: Թերեւս հրուանդանէն ալ բաւական հեռու կեցած ըլլար Նաւը:

(Շար.)

ֆը: Այս չէնքն հիմակ ամբողջ աւարտած է, ծաղկոցներն հրապուրիչ երեւոյթ մը կուտան և դրան առջև որձան մը պիտի կանգնուի, (ֆրանսական արձանամոլութիւնը հոս ալ կ'երեւի)—Սէն—Պերնարի վիթխարի շուն մը' որ իբրեւ ազատարար' Ալպեան ձիւնապատ լեռանց մէջ, մեծ յարգ և համբաւ կ'վայելէ: Ինչ պէտք է մտածել այս հոյակապ չէնքին, այս մարմարեայ ճակատին, այս թափծու երկաթէ փառաւոր վանդակին, այս կամարներուն և ծառուղիներուն վրայ: Բոլոր ասոնք տեսնելով, մարդ հարկաւ պիտի մտածէ թէ երբ մէկ կողմէն սատկած շուներու ասանկ մեծածախս փառաւոր չէնքեր կը կառուցանեն, անդին չատեր կան որք անօթի կ'մեռնին, և մեռնելէ վերջ ալ հանգչելու համար ափ մը հող չունին: Ամէն ժամանակ և ամէն ազգերու մէջ սիրելի մեռեալի մը յիշատակն յաւերժացնելու համար մահարձաններ կանգնած են, և սիրեցեալ մեռեալի մը յիշատակին համար ոև է յարգանք նուիրական պարտք մ'է, բայց երբ այս յարգանքը կենդանիներու ալ կ'տրուի, այն ատեն ո՛չ միայն այս յարգանքն անարգանք և ծայրայեղութիւն կ'ըլլայ, այլ քիչ մ'ալ յիմարութեան կ'յանգի:

Գ. ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Դչ. երկու կողմէն գործողութիւնն սկսաւ Եա Հոյի վրայ: Ճափոնցիք Բորդ Արթուրէ տարած ութ բթաչափ թնդանօթներով ռմբակոծեցին Բուգիլով բլուրը, որ կ'երեւի թէ այդ գետին վրայ բռնուած դիրքին բանալին է: Այս ռմբակոծում հետեւանք մ'ունեցած ըլլալու է, զի Ռուս բանակետղէն հասած տեղեկագրի մը մէջ ըսուած է թէ Ռուսաց կեդրոնը «վերստին դժուարին կացութեան մը մատնուեցաւ»: Զարմանալի չէ այդ, զի ինչպէս գիտենք, Ճափոնցիք վեց չաբաթէ ի վեր, Բորդ Արթուրի անձնատուութեան հետեւանքով տրամադրելի մնացած իրենց ամէն զօրքերն ու ռազմային կազմածքները Տալնիէ դէպ հիւսիս, և մասնաւորաբար ճափոնական ճակատին արեւմտեան թաղուկը փոխադրեցին: Հետեւապէս Ռուսները բացարձակապէս պատրաստ գտնուած ըլլալու էին այդ ռմբակոծման, զի լրագիրներէն անչուշտ ժամանակին իմացած էին Ճափոնցւոց այդ փոխադրութիւնները, և եթէ անփոյթ գտնուելով, այս մասին հակառակ միջոցներ ձեռք առած չէին, յանցանքը Ռուս սպայակոյտին վրայ կը ծանրանայ:

Մինչ Ճափոնցիք Բուգիլով լեռը կը ռմբակոծէին, միւս կողմէն ալ Ռուսները վերստին փորձեր ին իրենց արեւմտեան թաղուկէն Հուն գետն անցնելով Դայչեի վրայ յառաջանալ: Ճափոնական տեղեկագրին նայելով, Ռուսներուն դարձեալ միեւնոյն ուղղութեամբ սկսած այս անգամուան ձեռնարկն ալ առաջինին պէս անյաջող արդիւնք մ'ունեցեր է:

(Նոյէ Ֆրայէ Բրէսէ, Փետ. 18.)

ԸՆԹԱՑՔ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ.—Լիաօ Եանկէ հասած մասնաւոր հեռագիր մը կը հաղորդէ թէ Խարպինի հարաւային կողմը գտնուած ռուսական ուժերը կ'համնին 400 հազարի, որոցմէ 270,000ը կը գտնուին ճակատին անմիջապէս մօտը: Հայքուծայի մօտ Ռուսաց կրած ծանր պարտութիւնը լուսաբանեց սա կէտը թէ իրենց համար բոլորովին անօգուտ է յարձակողական ձեռնարկը: Հետեւապէս յառաջիկայ ճակատամարտին ժամանակն ու տեղն որոշելը կ'իյնայ Մարէշալ Օեամայի: Ռուս դասալիք զինուորներ ամէնքն ալ կ'ըսեն թէ Զօր. Քուրոբադքինի հրամատարութեան ներքև գտնուած ռուս բանակն ողբալի կացութեան մէջ կ'գտնուի և բարոյական կորովը վատթարացած է:

ԴԻՐՔԻՑԻ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍ-ՃԱՓՈՆԱԿԱՆ ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ.—Գերմանիոյ ծովային նախարար ֆոն Դիրբից Ռայխսդակի պիւտճէի յանձնաժողովին մէջ Փետր. 15ին յայտարարեց թէ յառաջիկայ տարւան սպասուած նաւային օրինագծին մէջ, ասկէց առաջ մերժուած վեց մեծ յածանաւերէ զատ պիտի առաջարկուի նաև շինել ծովը թորփիլանաւերու տորմիղներ: Նախարարն յետոյ խօսեցաւ այն փորձառութեանց վրայ որոնք ռուս-ճափոնական պատերազմին առթիւ ստացուեցան: Ըստ իր կարծեաց, ռուսճափոնական պատերազմին, առաջին կարգի զրահաւորներու տորմիղներն եղան վճռական չարժում ընողները, առանց սակայն աւելորդ դարձնելու ուրիչ կարգի նաւերը: Ճափոնցիներն յաղթական հանդիսացան միայն իրենց առաջին կարգի զրահաւորներուն առաւելակշռութեան չնորհիւ: Պատերազմին սկիզբները ռուսականին հետ բաղդատմամբ իրենց ունեցած պզտիկ առաւելութիւնը մեծցաւ Բորդ Արթուրի նաւաբաժնին փճացմամբը: Իրաւ է թէ Բորդ Արթուրի ռուսական տորմիղին փճացման գործը թորփիլանաւերն ի գլուխ հանեցին, սակայն այս արդիւնքը մեծ բան մը չէ, եթէ զայն բաղդատենք տիրող նպաստաւոր պայմաններուն հետ: Ներկայիս ճափոնական տորմիղին գերակչռութիւնն արդէն կ'ապահովէ վճռական ազդեցութիւն մ'ունենալ յառաջիկային մղուելիք ծովային ճակատամարտին վրայ: Ռուսները նոր փորձ մ'ըրին կացութիւնը փոխելու համար: Բորդ Արթուրի մէջ մնացող զրահաւորներն Օգոստ. 10ին դուրս ելան նաւահանգստէն, չենթարկուելու համար հիմակուան ճակատագրին: Ճակատամարտ մը տեղի ունեցաւ, ուր հրետանին և զրահներն եղան արդիւնքը վճռողներն և Ռուսաց ի փախուստ մատնուելովը կռիւը վերջացաւ. և ասով Ճափոնի և Ռուսիոյ միջև ծովային պատերազմը բոլորովին նոր չրջանի մը մէջ մտաւ: Ժամանակին ըսուեցաւ թէ առաջին կարգի զրահաւորներն ոև է օգուտ մը չունին, սակայն եթէ թողունք որ իրողութիւնները խօսին, այն ատեն պէտք է ըսել որ թորփիլանաւերն առանձին բնաւ օգուտ մը չունեցան, բան մը չըրին: Օգոստոս 10էն վերջ ռուսական նաւաբաժինը բոլորովին տարրալուծուեցաւ, սակայն հակառակ այս բանին ճափոնական թորփիլանաւեր իրենց գիչերային յարձակումներով ոչինչ կրցան ընել, թէև չատ նպաստաւոր առիթներ կային Սեւաստոփոլի վրայ յարձակելու, սակայն այդ պարագային ալ թորփիլանաւերը մեծ բան մը չկրցան ընել, և չատ երկայն տեւեց մինչև որ թորփիլանաւերը կրցան զրահաւորը փճացնել: Այնքան ատեն որ հրետանին գլխաւոր զէնքը մնայ, առաջին կարգի զրահաւորի մը կարեւորութիւնը բնաւ չի պակսիր: Ծովային պատերազմներու մէջ մարտանաւերու մեծութիւնը չէ որ հաչուի կ'առնուի, այս պատճառաւ առաջնակարգ զրահաւորներով կռուիլն ամէնէն աղէկն է: Ոչ—բացառիկ պարագաներու մէջ կրնան երկու մարտանաւ դէմ դիմաց ճակատիլ, և այն որ աւելի զօրաւոր է, միայն վրայ յաղթանակը կ'տանի: Ամէն պարագայի մէջ ուժերու տարբերութիւնը պէտք չէ որ չատ մեծ ըլլայ: Հին զրահաւորներն ալ բաղդատմամբ հին ուրիչ ամէն տեսակ նաւերու ամէնէն աւելի թէ' արտաքին և թէ ներքին վրաններով պաչտպանուած ըլլալու են: Ռուսիոյ անհրաժեշտ դարձուցին մեծ զրահաւորը, և այս պարագան ապագային ալ չպիտի փոխուի:

ՊԱԼԹԻԿԻ ՏՈՐՄԻՂԸ.—Ճիպուդի Բ. զրօսանաւը Փետր. 1'ին Մարսէյլ ժամանեց: Անգլ. ... և Բոգութինա զրօսանաւերուն հետ ըրած համբորդութեանը մասին հետեւեալը կ'հաղորդուի.—Ճիպուդի Բ. պայմանագրուած էր ֆրանսական ծովային սպայի մը կողմէ և Մարսէյլէն ճամբայ ելաւ ճիշտ այն պահուն երբ Պալթիկի տորմիղին առաջին նաւաբաժինը Միջերկրականէն կ'անցնէր: Ճիպուդի կ'առաջնորդէր միւս զրօսանաւերը, որք արագընթաց նաւեր ըլլալով չուտով հասան ռուսական մարտանաւերուն, և ... առաջ անցան նաւաբաժնին իբր առաջնորդ ծառայելով: Ամէն նաւահանգիստ հասնելնուն զրօսանաւերուն հրամատարներն հրահանգներ ստացան ֆրանսացի սպայէն, որ անոնց հետ պայմանաւորուած էր: Զրօսանաւերու բուն պարտականութիւններն սկսան երբ Սուէզի ջրանցքին բացերն հասան: Ճիպուդի բաժնուեցաւ նաւաբաժնէն և այդ կողմերը նուազ ծանօթ ջուրերու մէջ հետազօտութիւններ ըրաւ: Կարմիր ծով հասնելուն՝ հրահանգներ ստացաւ նաւահանգիստ մտնելու: Այնտեղ ֆրանսացի սպան նաւ. մտաւ, տեղեկութիւններ ուզեց նաւապետէն, և յետոյ գ'ացաւ ռուսական դրօշակիր նաւը: Մինչև որ զրօսանաւերն իրենց գործը կատարեցին, ռուսական նաւաբաժինը Կարմիր ծով չմտաւ:

** Պալթիկեան նաւատորմին Գ. նաւաբաժինը Դչ. օր մեկնեցաւ Լիպաւէ: Անցեալ չաբթու սառնակտորներն արգելք եղած էին նաւերուն դուրս ելնելուն. Նոր մեքենաները փորձուեցան, Նաւերուն դեռ խարիսխի վրայ գտնուած պահուն: Նաւաբաժնին ընկերացող ... փոխադրանաւերուն պատրաստութիւնները դեռ նոր աւարտեցան: Սլավա, Իմբերադոր Ալեքսանդր Բ. զրահաւորները, ... յածանաւերն ու Ալմէզ ականակիր յածանաւը, որ Գ. նաւաբաժնին միանալու համար Քրոնչտատ մէջ սպառազինուեցան, մէկ քանի չաբաթէն պիտի կրնան մեկնիլ: Ամբողջ նաւերն ալ պատերազմական գոյնով ներկուեցան: Ծովակալ Նիքոլա Իվանովիչ Նեպոկատով, Գ. նաւաբաժնին հրամատարը, որ իր դրօշը պարզած է Իմբերադոր Նիքոլա Ա. զրահաւորին վրայ, 55 տարեկան է և Ռուսիոյ մէջ ծովային ռազմագէտի համբաւ կ'վայելէ: 1871ին աւարտեց ուսման չրջանն և անդամակցեցաւ Պալթիկի Սպայակոյտին: 15 տարի մնաց հոն, և մանաւանդ 1883 և 1885ի ծովային ռազմափորձերուն մէջ մեծ կարողութիւն ցուցուց: 1888ին նաւային գնդակոծութեամբ հրամատար կարգուեցաւ ... թնդանօթակրին, ապա' ... թնդանօթակրին, և 1891ին ալ Բոյարին յածանաւին հրամատարութեան կոչուեցաւ, զոր պահեց մինչև 1895: Իր այս վերջին պաչտօնին մէջ ցուցած արիութեամբ ծովային պաչտօնատան ուշադրութիւնն իր վրայ հրաւիրելով, 1896ին իրեն յանձնուեցաւ Ադմիրալ Նախիմով առաջնակարգ յածանաւին եւ քիչ ետքն ալ Մինին յածանաւին հրամատարութիւնը: Նեպոկատով իբր հրամատար ... զրահաւորին, չատ մեծ ծառայութիւններ ըրաւ 1898էն մինչև 1901, որով 1901 տարւոյն վերջին Բ. կարգի ծովակալութեան բարձրացաւ: Ծով. Նեպոկատով, 1903 տարւոյն կէսէն ի վեր պետն էր Սև ծովու նաւաբաժնին դպրոց—նաւերուն, և այս պաչտօնին մէջ ալ արժանացաւ Բեդերսպուրկի բարձրաստիճան անձնաւորութեանց գոհութեան: Այս անգամ ալ իր գործունէութեամբը մեծ բաժին ունեցաւ Գ. նաւաբաժնին պատրաստման ժամ առաջ աւարտելուն մէջ:

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐԷ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ.—Բորդ Արթուրէ փախստականներու հոսանք մը կ'չարունակէ անցնիլ Շանկայէ, ուր 2000 հոգի հասան մէկ չաբթուան մէջ և տակաւին ուրիչներ ալ կ'սպասուին: Ոչ—զինուորական փախստականները գլխաւորաբար գիւղացիներ են: Ասոնցմէ չատերն իրենց ընտանիքներն միասին առած են: Զինուորականները, որք սպաներու ծառայողներ են, 500ի չափ են և ... կազմուածքով: Խեղճ գիւղացիները ցամաք ելան սոսկալի ցուրտ օդով մը: Փոխադրանաւուն մէջ ալ նախապէս հոգ չէր տարուած փախստականներու հանգստութեան համար անհրաժեշտը հայթայթելու մասին: Ստորին կարգի հրեայ օթեւաններու և չինական գինետուններու համար չահաւոր առիթ մ'էր ասիկա: Մեծ եռանդով գինետուններ յաճախողներ ... չոգենաւուն մէջ արբեցութեան տեսարաններ պարզեցին: Շանկայի նաւահանգստի ... մէջ տեղական իչխանութեան կողմէ արգիլուեցաւ ըմպելիք վաճառումը: Մնացեալները, թէ' զինուորներն և թէ գիւղացիներն իրենց համբերատար վարմունքով ընդհանուր համակրութեան արժանացան: Միւս կողմէ ռուս նաւային և զինուորական իչխանութեանց կողմէ փախստականներն հոգալու համար ցոյց տրուած կանխատեսութիւններն ու կարգադրութիւններն Չինացիներու կողմէ եղածներէն աւելի չէին: Շանկայի քաղաքային խորհուրդն առաջարկեց ամէն կարելի աջակցութիւն ընել ռուս հիւպատոս Մ. Բլէյմէնովի, որ առանց յոգնելու ձեռքէն եկածը կ'ընէ, բայց տիրող քաոսային վիճակին հետեւանօք, կարելի չէ եղած գոհացուցիչ արդիւնքներ ստանալ:

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ.—Բըլէ Բոքէլէն Բեդերսպուրկէն հետեւեալ հեռագիրը կ'հրատարակէ. «Հաչտութեան խնդիրն այլ եւս ենթադրական բան մը չէ: Կ'ըսուի թէ Զարը խորհրդակցեցաւ իրազեկ անձնաւորութեանց հետ լաւագոյն կերպով զինադուլ ընելու և յետոյ վերջնական համաձայնութեան մը յանգելու համար այն պայմաններուն վրայ որոնք ոչ ստորնացուցիչ պէտք է ըլլան և ոչ ալ չափազանց: Կ հաւատուի նոյն իսկ թէ Ն.Կ. Վեհափառութիւնն արդէն այս խնդրոյ մասին նախապատրաստական տեղեկագիրներ ընդունած է:» Բեդերսպուրկէն ուրիչ հեռագիր մը Բըլէ Ժուռնալի մէջ միեւնոյն կերպով կ'խօսի հաչտութեան խնդրոյն վրայ, միայն թէ կ'աւելցնէ որ ամէն ինչ նկատառումէ անդին չէ անցած տակաւին:

ՌՈՒՍԱՑ ԴԷՊ ՀԱՐԱՒ ԻՋՆԵԼՆ ԱՐԳԻԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ.—Տալնիէ կ'ծանուցանեն թէ Ճափոնցիք յաջողեցան օդն հանել իրենց ամուր դիրքերուն չուրջ գտնուած գետերուն վրայի ամէն կամուրջները: Հետեւաբար Ռուսները չպիտի կրնան դէպ հարաւ քալել, զի ձիւնհալին պատճառաւ անկարելի պիտի ըլլայ անցնիլ գետերէն:

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐԻ ՄԷՋ ԳՏՆՈՒԱԾ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ.—Զիֆուի մէջ հրատարակուող Վեսդըրն լրագիրը կ'գրէ թէ անդ... ռուս հիւպատոսն իմանալով որ Ճափոնցիք կ'պատրաստուին Բորդ Արթուրի մէջ տպաքինող 2,500 վիրաւորներն ու հիւանդները Զիֆու փոխադրել, միջոցներ ձեռք առաւ, նաւեր վարձելով այդ հիւանդներն Տալնիէ ուղղակի Ռուսիա ղրկելու, զի Զիֆուի մէջ անոնց դարմանին համար պէտք եղածները չկան:

ՖՐԻՏՐԻԽ ԼԷՕՓՈԼՏ ԻՇԽԱՆԸ, ինչպէս ծանուցանեցաւ արդէն, անցեալներն հրաման ընդունեց գերման կայսրէն, Մ. Արեւելեան ռազմադաչտն երթալու: Իչխանը Դչ. օր Պերլինէ Բեդերսպուրկ գնաց Նիքոլա կայսեր ներկայանալու համար, և կ'ըսուի թէ Վիլհէլմ կայսեր ձեռագիր երկար մէկ նամակը տարած է Ռուս վեհապետին: Իշխանը քիչ մը ատեն Բեդերսպուրկ մնալէ ետք Ճենովա պիտի դառնայ և ծովու ճամբով Դիեննին պիտի երթայ, և անկէ ալ նպատակ ունի այցելութիւն մ'ընել Բեքինի արքունիքին: Այս ամէնն ետքն է որ ռազմադաչտ պիտի երթայ:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ Մ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՎՐԱՅ.—Աւստրիական բանակին Սպայակոյտի զօրավարներէն Մաքսիմիլիէն ֆոն Հէօն ուրբաթ իրիկուն Վիեննայի մէջ, չատ հետաքրքրական և իմաստալից բանախօսութիւն մ'ըրաւ ռուսճափոնական պատերազմին վրայ' մինչև Բորդ Արթուրի անկումը: Այս բանախօսութեան մէջ երկու թչնամի բանակներուն ռազմավարութեան եղանակներուն վրայ մանրամասն տեղեկութիւններ կան: Բանախօսը կռիւին ծագման պարագաներուն վրայ զինուորական—քաղաքական տեսութիւն մ'ընելով պատերազմին առաջին դրուագը նկարագրելէ ետք, պատերազմին' զինուորականաց համար չատ հետաքրքրական եղող փորձառութեանց մէկ նկարագրութիւնն ըրաւ: —«Կռիւներուն մէջ անծուխ վառօդը չատ սոսկալի ազդեցութիւն մ'ունեցաւ: Կրակ ընող զօրախումբին քանակութիւնն յաճախ անկարելի էր որոշել: Կ'կարծուէր թէ այս ինչ դիրքը բռնող զօրքերը քիչուոր էին, ուստի անփոյթ և անզգոյշ կ'կենար թչնամին, և ասանկով մեծ կորուստներու կ'ենթարկուէր: Տեսնուեցաւ որ հետեւակազօրքը ճակատամարտին վճռականութիւն տուող տարրն էր: Բաղդատաբար չատ թեթև սպառազինուած բայց լաւ մարզուած ճափոնական հետեւակազօրքն ամէն տեսակէտով գերադաս էր իր թչնամիէն: Ամէն մէկ յարձակման ատեն, Ճափոնցիք կանոն ըրած էին պայուսակնին յաճախ նաև իրենց վերարկուն և վրանի լաթերը վար դնել, և ձախ ուսէն մինչև աջ կողին վրայ երկարող կապոյտ լաթի մը մէջ չորս բաժին բրինձ և իրենց կրելու կարողութեան չափ ալ փամփուշտ դնելով կ'կռուէին և այսպէս չատ օրեր առանց պայուսակի կ'անցընէին:»

Բանախօսը մեծ կարեւորութիւն չի տար թնդանօթներու ազդեցութեան, բայց կը հաստատէ թէ ռուս հրետանիներն իրենց թնդանօթաձիգներուն կարողութեամբն և կրթութեամբ չատ գերազանց էին ճափոնցիներուն: Կ'ըսէ թէ Ճափոնցիք ամէն տեղի և երկրի յարմարող լեռնային թընդանօթներով օժտուած էին: Թնդանօթներուն ազդեցութեան պակասութիւնը կ'հաստատէ հետեւեալ իրողութեամբ: Օրինակի համար, Հոկտ. 27ին ճափոնական 27 թնդանօթներ ու հրասանդներ, պայծառ արեւու մը տակ, հինգ ժամ չարունակ գործելով 555 ռումբ և 631 խառնընկէց տեղացուցին ռուս հետեւակազօրքի մը բռնած մէկ դիրքին վրայ, որ սակայն ամուր յենարան մ'իսկ չունէր: Ճափոնցի հետեւակազօրքն ապա այդ դիրքը գրաւած ատեն 50 մեռեալ և երկու քանդուած թնդանօթ գտաւ հոն: Բանախօսը կ'յաւելու թէ չտեսնուեցաւ երբեք որ հրետանին առաջէ դիրք բռնող պահակազօրքը կամ արգելք ըլլար հետեւակազօրքի մը յարձակման մը:

Հազարապետ ֆոն Հէօն, Բորդ Արթուրի պաչարման խնդրոյն վրայ խօսելով. սապէս վերջացուց.—Այն երկու ամիսը, որ վերջին աստիճան դիւցազնական պաչտպանութեան մը, և անդամալուծող յարձակման մը տեսարանները ներկայացուցին աչխարհի, բաւական սարսեցին այն գաղափարը թէ ամրաքաղաքի կռուին ալ դաչտային կռիւներու պէս պէտք է վարել և թէ հին բերդաքաղաքներու ռազմային կազմածքները գործածելի են դեռ: Ճափոնցւոց յարձակումներն անհամար զոհերու պատճառ եղան և մէկ քանի առաջապահ ամրութիւններէ զատ ուրիչ օգուտ մը չունեցան իրենց: Ճարտարապետ—զօրավար Քոնտրադէնքօ, որ բերդաքաղաքին պաչտպանութեան հոգին էր, ցամաքային ականներով մեծ վնասներ պատճառեց յարձակող թչնամի զօրագունդերուն, այնպէս որ Ճափոնցիք վերջապէս պարտաւորուեցան մեթոտաւոր պաչարման յարձակումներով գոհանալ: Անհնարին աչխատութեամբ և զարմանալի ջանքերով, յաջողեցան Ռուսաց ամրոցներուն ստորոտները յառաջանալ: Նոր յարձակումներ, որոց մէջ կարգ մը թեթև ռումբեր չատ գործածուեցան, լոկ զոհերու պատճառ եղան առանց հետեւանքի: Երկու թչնամիները գետնին տակէն ճամբաներ բանալով իրարու դէմ յարձակեցան և դիւցազնական պայքարը գետնին տակէն սկսան մղել: Բայց վերջապէս յարձակողաց թուական առաւելութիւնը չահեցաւ իրաւունքը: Մանաւանդ թէ թչնամւոյն ռումբերն ու հիւանդութիւնները քառորդ մասի իջուցին պահակազօրքին սկզբնական քանակութիւնը, և Ցնվ. 2ին անձնատուութեամբ վերջացաւ բերդաքաղաքի մը ամենափառաւոր պաչտպանութիւնը որուն նմանը տեսնուած չէր ցարդ, և ասով վերջացաւ նաև պատերազմին առաջին մասը:»

ՃԱՓՈՆԻ ԿԱՅՍԵՐ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ. Միքատոն իր ծննդեան տարեդարձին առթիւ երեք կարճ քերթուածներ կամ բանաստեղծական տաղեր յօրինելով, իր ժողովուրդին, մասնաւորապէս իր բանակին նուիրեց զանոնք, որոց իմաստն է հետեւեալը.

Ա.—«Զաւակներուն ամէնքն ալ ռազմադաչտին վրայ գտնուելնուն համար, ծերերուն բաժին ինկած է լերանց և դաչտերուն խնամքը:»

(Կայսրը կ'խղճայ ծերունիներուն վրայ որ աչխատելու ստիպուած են. մինչդեռ աչխատելու պէտք չպիտի ունենային եթէ իրենց զաւակները երկրին մէջ մնացած ըլլային:)

Բ.—«Յաւիտենականն ու բարձրեալն Աստուծոյ հաճելի պիտի ըլլայ իմ ժողովրդս, որ արդարութիւն կ'անձկայ միչտ:»

Գ.—«Կ'ըսեն թէ աչխարհիս ամէն երկիրներն եղբայր են իրարու. ապա ուրեմն ինչո՞ւ համար ալիքներն ու հողմերն այսչափ կատաղութեամբ կ'կռուին:»

(Կայսրը ցաւ կ'յայտնէ պատերազմին համար, զի մարդիկ եղբօր պէս սիրելու են զիրար):

Այսպիսի քերթուած մը Միզօ-Իժօ—մօծի կ'կոչուի. այսինքն 31 վանկով ոտանաւոր: Ճափոնի մէջ սովորութիւն է որ կայսրն ամէն տարի մէյմէկ բնաբան կ'ընտրէ որուն վրայ ժողովուրդը քերթուած մը կը յօրինէ: Արքունեաց նախարարն հրատարակութեան կուտայ զայն: Ամբողջ ժողովուրդը, նոյն իսկ գիւղացիք, կրնան մասնակցիլ անոր և իրենց քերթուածներն արքունիք կ'ղրկեն, ուր այս գործին համար յատուկ դիւան մը կայ, Ուդադոքօրօ, այսինքն «Երգի դիւան»: Հոն կ'քննուին ժողովրդեան ամէն դասակարգերէն ղըրկուած հազարաւոր երգերն և ասոնց լաւագոյնները կ'հրատարակուին: 1904 տարուան նիւթն էր. «Եղեւնը ժայռերուն վրայ»: 1905ին քերթուածին նիւթը պիտի հրատարակուի մօտերս:

ԿԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԹՕՔԻՕ, Փետր. 19.—Շա—Հոյի ճափոնական բանակէն կ'հեռագրուի թէ Ռուսք մեծ գործունէութիւն մը ցոյց կուտան: Մեծ ուժեր կ'հաւաքեն Զօր. Քուրոբադքինի բանակին դէմ, կ'կարծուի թէ Զօր. Քուրոբադքին յարձակողական չարժում մը կ'կազմակերպէ: Անցեալ Հինգչաբթի և Ուրբաթ Ռուսք մէկ քանի կէտի վրայ ռմբակոծեցին Մարէչալ Օեամայի կեդրոնն և ձախ կողի դիրքերը:

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿ, 18.—Զօր. Քուրոբադքին կ'հեռագրէ կայսեր.—«Լսելով որ Մոնկոլիոյ մէջ Հունչուլին—Քուէնձի երկաթուղւոյ գծին դէմ բազմաթիւ Հունկուզներ կ'հաւաքուին Ճափոնցի հրամատարներու հրամանին տակ, ամսոյս 11ին ջոկատ մը ղրկեցի անոնց դէմ տեղական ... հրամանին ներքև, որ յաջողեցաւ ցրուել Հունկուզներն ու Ճափոնցիները, Դունեգոնի մօտ: Ռուսք հալածեցին թչնամին, բայց հիւսիս. արեւմտեան կողմը, պաչարուեցան ճափոնական զօրաց կողմէ: Կռիւ մը տեղի ունեցաւ որմէ վերջ մեր ջոկատն յաջողեցաւ Կունչուլինի վրայ քաչուիլ:» (Տես նաև Շաբաթ օրուան մեր հեռագիրը, Մ. Խմբ.):

ԹՕՔԻՕ, 18.—Ճափոնի արտաքին գործոց նախարարը բացարձակապէս հերքեց թէ Ճափոն ոչ—պաչտօնապէս իմացած ըլլայ որ ի'նչ են հաչտութեան համար Ռուսիոյ պայմանները:

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿ, 18.—Բեդերսպուրկի Հեռագր. Գործակալութիւնը կը հերքէ թէ բանակցութիւններ սկսած ըլլան Ճափոնի հետ հաչտութիւն կնքելու համար: Ցարդ ոև է առաջարկ եղած չէ Ճափոնի' հաչտութեան վրայ:

ԲԱՐԻԶ, 18.—Զօր. Քուրոբադքին կ'հեռագրէ կայսեր. «Զօր. ...ի հրամանին տակ գտնուող կամաւոր որսորդ զօրքերը հետազօտութիւն մ'ըրին թչնամիին կեդրոնական ձախակողմեան դիրքերուն վրայ և տեսան որ բազմաթիւ օգնական զօրք և մեծաքանակ ռազմամթերք եկեր է: Կռիւներ տեղի ունեցան մեր աջ թեւին վրայ, որոց արդիւնքը նպաստաւոր եղաւ մեզ: Կեդրոնին վրայ քանի մ'օրէ ի վեր կ'ռմբակոծենք թչնամին որ սաստիկ թնդանօթաձգութեամբ մը կ'պատասխանէ:»

ԲԱՐԻԶ, 18.—Նիւ—Եօրքէ կ'հեռագրուի թէ Նիւ—Եօրք Հերըլտ իմացած է որ Ամերիկայի մէջ մասնաւոր գործարաններու կողմէ չինուած 5 ընդծովեայ մարտանաւեր Ճափոն, Եօզաքայի զինուորական նաւահանգիստը տարուեցան, և Ճափոն այժմ ունի 13 ընդծովեայ մարտանաւ և սուզող թորփիլանաւ:

ԲԱՐԻԶ, 18.—Մոսգովէն կ'հեռագրուի թէ Ռուսք ամսոյս 17ի առտուն ձախ թեւին կողմը Զին—Հօ—Չէնկի ճամբուն վրայ Ուծիձունի կողմը Ճափոնցիներուն մէկ յարձակումն ետ մղեցին: Ճափոնցիք նորէն յարձակեցան:

ՄՈՍՔՈՒԱ, 18.—Մոսքուայի քաղաքապետութիւնն որոչեց իր խորին ցաւակցութիւններն յայտնել կայսեր հօրեղբայր և Էլիզապէթ Մեծ—Դքսուհիին ամուսին Սերժէյ Մեծ—Դուքսին մահուան առթիւ:

ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿ, 18.—Աւստրեւհունգարիա դադրեցուց Ռուսիոյ հետ իր առեւտրական դաչնագիրը:

ԲԱՐԻԶ, 18.—Հիւսիսի Ըկեւմտական ընկերութեան նախագահ Պառոն տը Դրըկիմէյի ինքնաչարժ կառքը չրջեցաւ Լիօնի մօտ, և Պառոնն ու մեքենավարը մեռան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՐԻԿԱ.—... Մր. Ռուզվելտ և Ծերակոյտի ...—Մ. Նահանգաց Ծերակոյտն յոյժ կարեւոր խնդրոյ մը մէջ Նախագահին հակառակ որոշում մը յանգեցաւ: Ծերակոյտին իրաւունքն է օտար Կառավարութիւններու հետ կնքուած դաչնագրերը քննել, վաւերացնել կամ մերժել: Վերջերս Ամերիկա Իրաւարարական Դաչնագրեր ստորագրեց Անգլիոյ, Ֆրանսայի և ուրիչ Եւրոպեան Տէրութիւններու հետ: Իրաւարարութեան սկզբունքն այնքան հաճելի է ամերիկացի խաղաղասէր ժողովրդին որ բնաւ դժուարութիւն չէր սպասուեր Ծերակոյտէն: Կնքուած դաչնագրերուն մէջ ըսուած էր որ երբ խնդիր մը իրաւարարութեան յանձնել ուզուի, նոյն մտօք «համաձայնութիւն» մը պիտի ստորագրուի Մ. Նահանգաց Կառավարութեան և այն օտար Կառավարութեան միջև որուն հետ է գժտութիւնը: Արդ, Ծերակոյտն այս «համաձայնութիւն» բառին տեղ «դաչնագիր» բառը դնելով վաւերացուց ամէնքն ալ: Միայն թէ այս մէկ բառին փոփոխումովը բոլոր խնդիրը ջուրն ինկաւ. զի ամէն «դաչնագիր» պէտք է նախապէս քննուի, վիճաբանուի և վաւերացուի Ծերակոյտին մէջ, մինչդեռ ամէն «համաձայնութիւն» կ'կնքուի ու կը գործադրուի միմիայն օրուան Նախագահին և իր Վարչութեան պատասխանատուութեան ներքև: Օտար երկրի մը հետ վէճի տակ եղող խնդիր մը եթէ նախապէս Ծերակոյտին մէջ ծեծել պէտք ըլլայ, խնդիրն ա'լ աւելի կ'արծարծի, կ'տաքնայ, կիրքերը կ'գրգռուին երկուստեք, և իրաւարարութեամբ գործն անոյշ տեղը կապելու յոյս չի մնար: Ուստի Մր. Ռուզվելտ կանխաւ ազդարարեց որ եթէ «դաչնագիր» բառը դրուի, այսինքն՝ եթէ որոշուի թէ իրաւարարութեան յանձնուելիք ամէն խնդիր նախապէս վիճաբանուի Ծերակոյտին մէջ, ինք ետ կ'կենայ գործէն, և օտար Կառավարութեանց հետ կնքած Իրաւարարական Դաչնագրերուն ամէնքն ալ ետ կ'առնէ, այսինքն՝ պատկանեալ Կառավարութիւններէն պիտի խնդրէ որ առ այժմ չեղեալ նկատեն զանոնք: Նախագահին այս որոշումը լսելէն ետքն ալ Ծերակոյտը պնդեց իր առարկութեան վրայ, և 9ի դէմ 50 քուէի ստուար մեծամասնութեամբ, ... բառը դրաւ ... բառին տեղ: Ծերակուտականք յայտարարեցին թէ իրենք Մր. Ռուզվելտի հետ խնդիր չունին, իրաւարարութեան սկզբունքին դէմ ալ առարկութիւն չունին, բայց ամերիկեան հիմնական օրէնքն իրենց իրաւունք տուած է օտար Կառավարութեանց հետ կնքուելիք ամէն կարեւոր կարգադրութիւնները քննելու, և չեն կրնար իրաւարարութեան պատրուակին տակ թող տալ որ օրուան Վարչութիւնն իրենց իրաւասութիւնը կըրճատէ: Ինչպէս կ'երեւի խնդիրը սերտիւ լծորդուած է Ամերիկայի Կառավարութեան էական սկզբունքներուն հետ: Բայց Մր. Ռուզվելտի արտաքին գործոց նախարարը, Մր. Հէյ կ'գանգատի թէ «Կարելի չէ որ երկիր մը 9) հատ արտաքին գործոց նախարար մէկէն ունենայ և գործ վերջացնէ օտար երկիրներու հետ»: Ծերակոյտի մէն մի անդամ արտաքին գործոց նախարարի պաչտօն կ'ուզէ կատարել:

ԱՆԳԼԻԱ Եւրոպայի ամէն Տէրութիւններէն և Մ. Նահանգներէն ա'լ աւելի մեծ վաճառական Տէրութիւն մ'է: Իր արտածումներուն ու ներածումներուն գումարը կրկնապատիկ կամ եռապատիկ աւելի է քան Միացեալ Նահանգաց, կամ Ֆրանսայի, կամ Գերմանիոյ առեւտրական չարժումը: Բայց մինչդեռ ամէն Տէրութիւն «Վաճառականութեան Նախարար» մ'ունի, Անգլիա դեռ չունի, այլ իր առեւտրական գործերուն կ'հսկէ ի ձեռն «Վաճառականութեան Խորհուրդ»ի մը, որ ժողով մ'է, և անոր Նախագահը չունի նախարարական աստիճան և ազդեցութիւն և հեղինակութիւն: Անգլիացիք երկար տարիներ խորհելէն ետքը, այս անգամ մտքերնին դրած են վերջ տալ այս անպատեհութեան, և Դահլիճին կողմէ Խորհրդարանի ներկայ նստաչրջանին բերուելիք օրինագծերէն մին այս պիտի ըլլայ. զի կ'ուզեն որ իրենց նախարարացու անձնաւորութեանց մէջէն ամէնէն կարողներն ալ յօժարին Վաճառականութեան Նախարար ըլլալու, մինչ Խորհրդոյ մը նախագահութիւնը միչտ երկրորդ կարգի կարողութեան մը կ'վիճակի: Մինչև ցարդ այսպիսի փոփոխում մը չընելնին կ'ցուցնէ թէ Անգլիացիք ո'րչափ պահպանողական և աւանդապահ են վարչական հին ձեւերն ու մեթոտները փոփոխելու մասին: Ոգին կ'փոխեն բայց ձեւերն ու անուններն նոյնը կ'պահեն: Սակայն և այնպէս, անգլիական պահպանողականութիւնն անգամ չափ և սահման մ'ունենալ կ'թուի:

ԼՈՐՏ ԼԸՆՍՏԱՈՒՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԼՈՐՏԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ.—Արտաքին գործոց նախարար Լորտ Լէնստաուն Փետր. 15ին Լորտերու Ժողովին մէջ, ուղերձի բանաձեւին վիճաբանութեան ատեն ըրաւ նաև հետեւեալ յայտարարութիւնները. «Մէկ անգամ միայն Անգլիա ըստ երեւոյթին պատերազմի բռնուելու չփոթութեանց մէջ ինկաւ եւ այն ալ Հիւսիսային Ծովու միջադէպին առթիւ: Կ'յիշեմ այս պարագան, որովհետև կ'ուզեմ ցոյց տալ ... առ այս Լորտ Սբէնսէրի ըրած գնահատական խօսքերուն թէ կառավարութիւնը խաղաղասիրական ընթացքի մը հետեւեցաւ:» Անգլեֆրանսական համաձայնութեան վրայ խօսելով, Լորտ Լէնստաուն ըսաւ թէ անիկա մեծ արժէք մը ստացած է մանաւանդ ներկայիս, աչխարհի խաղաղութիւնը պահպանելու համար: Գալով Դիպէզի խնդրոյն յայտնեց թէ կառավարութիւնն հարկադրուած է պարաւելու Երնկըզպէնտի ընթացքը, որովհետև տուած տեղեկութիւնները չափազանցուած են և ինքն օրինական սխալի մէջ ինկած է, Շումպի հովիտը 70 տարուան պայմանաժամով վարձու առնելու պայմանագրութիւն մը կնքելով, հակառակ կառավարութեան կողմէ եղած ազդարարութեանց: Հնդկական կառավարութիւնն որդեգրեց բրիտանական կայսրութեան գործելու եղանակը: Ամէն պատճառ ունինք հաւատալու, կ'ըսէ Նախարարը, որ Հնդիկ կառավարութիւնն հաւատարմօրէն հետեւեցաւ մեր հրահանգներուն: Աֆղանստանի պատկանեալ բանակցութեանց յառաջ երթալուն մասին, Լորտ Լէնստաուն ըսաւ թէ բան մը չի կրնար ըսել և թէ բանակցութիւններն որք դեռ կ'չարունակուին, իրենց մէջ մեծ դժուարութիւններ ունին:» Յետոյ աւելցուց թէ ներկայիս բնաւ փափաքելի չէ որ այդ մասին եղած վաւերաթուղթերը հրատարակուին: Նախարարը պաչտպանելէ վերջ կառավարութեան զինուորական քաղաքականութիւնը, յայտարարեց թէ նախարարութիւնը մտքէն չանցըներ, ընդդիմադիրներու հարցաքննութեան հետեւանօք, գործէ քաչուիլ և հարցուց Լորտ Սբէնսէրի թէ արդեօք ինքն և բարեկամները պատրա'ստ են ընդունելու կառավարութեան պատասխանատուութիւնը: (...) Երկար վիճաբանութենէ վերջ ուղերձի բանաձեւն ընդունուեցաւ:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ.—Նիւ Եօրք Հերըլտ երկար հեռագիր մը կ'հրատարակէ Ուաշինկթընէ, հաստատող թէ Գերմանիա ուրիչ ամէն ատենէ աւելի հիմա դիւանագիտական լաւագոյն յարաբերութիւններ կ'մչակէ Ամերիկայի հետ: Մեծն Ֆրետրիխի արձանին բացումը Պերլինի համար չատ գոհացուցիչ եղանակով մը տեղի ունեցաւ: Ատոր հետեւանքն էր որ Գերման կայսրը Բրոֆէսէօռներու փոխանակութիւնը թելադրեց և Ռուզվելտ հաճութիւն տուաւ ատոր: Գերմանիա կ'պաչտպանէ Ամերիկայի Ծ. Ասիոյ մէջ բաց դրան քաղաքականութիւնը: Կայսրն առիթ չի փախցներ Ամերիկացւոց բարեկամ երեւնալու: Պերլինի մայր եկեղեցւոյն օծման արարողութեան համար Ամերիկացի կղերին եղած հրաւէրն և անոնց ալ Ամերիկայէն մինչեւ Գերմանիա երթալը բարեկամական նոր կապերու հետեւանքն է: Բայց ամէնէն կարեւոր իրողութիւնը Գերմանիոյ կառավարութեան կողմէ, Գերմանաամերիկեան մաքսային փոխադարձութեան պայմանագիր մը կնքելու համար եղած հրաւէրն է,

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ

ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ Դուստր Բարձր. Նաիլէ Սուլթանի' Դատական նախարար Բարձր. Ապտիւրրահման փաչայի որդի' Պետական Խորհրդոյ անդամ Արիֆ Հիքմէթ պէյի հետ չնորհիւ Աստուծոյ ի մօտոյ ամուսնութիւնը տեղի ունենալուն առթիւ, Կայս. Բարձր արտօնութիւն չնորհուած է անոնց նչանախօսութեան:

ԿԱՅՍ. ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.—Այս տարի երկու հարիւր յիսուն հազարէ աւելի ուխտաւորներ կատարեալ հանգստութեամբ իրենց ուխտը կատարած ըլլալով, ՎԵՀ. ԿԱՅՍՐՆ Իր Գոհունակութիւնը բարեհաճեցաւ յայտնել տալ Մէքքէի Էմիրին և Հիճազի կուսակալին:

ՀԱՊԵՇԱՍՏԱՆԻ Կայսրը Գուրպան Պայրամի առթիւ չնորհաւորական հեռագիր ուղղած ըլլալով Կայս. Պալատ, ՎԵՀ. ԿԱՅՍՐԸ չնորհակալութիւն յայտնեց հեռագրով:

